Գրքույկը տպագրվել է «Բաց հասարակության հիմնադրամներ - Նյու Յորք»-ի ֆինանսական աջակցությամբ:

OPEN SOCIETY FOUNDATIONS

HELSINKI CITIZENS ASSEMBLY

ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի Հայաստանի Հանրապետությունում իր միջոցներով, ինչպես նաև անվճար ստանալ բժշկական օգնություն և սպասարկում՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, տարիքից, առողջական վիճակից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից[1]:

[1] ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդված, «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդված

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի

- Մատչելի ձևով ստանալ տեղեկություն իր առողջական վիճակի, հետազոտության արդյունքների, հիվանդության ախտորոշման և բուժման մեթոդների, դրանց հետ կապված ռիսկի, բժշկական միջամտության հնարավոր տարբերակների, հետևանքների և բուժման արդյունքների մասին:
- Գրավոր կամ բանավոր կերպով տալ համաձայնություն՝ իր նկատմամբ կիրառվող բժշկական միջամտության համար (18 տարին չլրացած կամ օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված հիվանդին, ինչպես նաև այն դեպքերում, երբ հիվանդի վիճակը թույլ չի տալիս արտահայտել իր կամքը, բժշկական միջամտության համար համաձայնությունը տրվում է նրա օրինական ներկայացուցչի կողմից):
- Ստանալ փոխհատուցում բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման և իրականացման ընթացքում իր առողջությանը հասցված վնասի դիմաց:

Ձեր խախտված իրավունքների պաշտպանության նպատակով կարող եք անվճար խորհրդատվություն ստանալ՝ դիմելով

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի
Վանաձորի գրասենյակ

Հասցե՝	Տիգրան Մեծի 59
Վեբ կայք՝	www.hcav.am
Էլ. փոստ՝	hcav@hcav.am
Ֆաքս՝	(+374) 322 41236
Հեռ.՝	(+374) 322 42268
Բջջ.՝	(+374) 094 042268

Թեժ հեռախոսագիծ՝ 08000 121

Հղումներ

http://www.apnet.am

ՀՀ Սահմանադրություն

ՀՀ քրեական օրենսգիրք

«Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» ՀՀ օրենք

«Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենք

ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձիք ունեն միջազգային օրենսդրությամբ, ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր իրավունքներն ու ազատությունները, մասնավորապես՝

- հաստատելու նամակագրական կապ,
- օգտվելու հեռախոսակապից,
- հանդիպելու այցելուների հետ,
- ունենալու և ձեռք բերելու առաջին անհրաժեշ-տության իրեր ու պարագաներ,
- օգտվելու անձնական հագուստից,
- հաղորդակցվելու թերթերի և լրագրերի միջոցով,
- անմիջականորեն դիմելու բուժհաստատության ղեկավարին կամ բաժանմունքի վարիչին՝ բուժման, հետազոտման, դուրսգրման, օրենքով սահմանված իր իրավունքների պաշտպանության հարցերով,
- տալու համաձայնություն և ցանկացած փուլում հրաժարվելու բուժական մեթոդներից և միջոց-ներից, եթե դրանք կիրառվում են գիտական կամ փորձարարական նպատակներով, ուղեկցվում են լուսա-, տեսա- և կինոնկարահանումներով,

- պահանջելու իր ընտրած հոգեբույժ մասնագետի մասնակցությունը,
- մայրենի կամ իրեն հասկանալի այլ լեզվով տեղեկություններ ստանալու իր իրավունքների, ազատությունների և պարտականությունների վերաբերյալ,
- օգտվելու առողջության պահպանման իրավունքից, այդ թվում՝ ստանալու բավարար սնունդ, անհետաձգելի բժշկական օգնություն, ինչպես նաև զննության ենթարկվելու իր նախընտրած բժշկի կողմից սեփական միջոցների հաշվին,
- օգտվելու իր նկատմամբ բարեկիրթ, անձը չնվաստացնող վերաբերմունքից,
- օգտվելու անձնական անվտանգության ապահովման իրավունքից,
- օգտվելու անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքից,
- օգտվելու տեղեկատվություն ստանալու իրավունքից,
- օգտվելու գաղտնիության պահպանման իրավունքից,
- կոչվելու իր անվամբ, զերծ մնալու խոշտանգումներից, դաժան, անմարդկային, անձը նվաստացնող վերաբերմունքից և պատժից[2]:

[2] «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդված

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող պացիենտների խախտված իրավունքների վերականգնման ուղիներ



Սևանի հոգեկան առողջության կենտրոն
հասցե՝ Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Նաիրյան 169
հեռ.՝ (+374) (261) 2 13 59, (261) 2 24 17

Սևանի հոգեկան առողջության կենտրոնի Գավառի մասնաճյուղ
հասցե՝ Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Շահումյան փողոց
հեռ.՝ (264) 2 48 74

Սևանի հոգեկան առողջության կենտրոն, Մարտունու շրջանային բաժանմունք
հասցե՝ Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի, Գետափնյա փող. 1
հեռ.՝ (262) 4 03 69

«Հոգեկան առողջության հիմնադրամ» ՀԿ
հասցե՝ ք. Երևան, Հանրապետության 82, բն. 6
հեռ/ֆաքս՝ 54-45-04
Վեբ կայք՝ www.mentalhealth.am
Էլ. փոստ՝ mhf@mentalhealth.am

«Հոգեկան հիվանդ և միայնակ ծերերի խնամք» ՀԿ
հասցե՝ Մոլդովական 2, բնակարան 1
հեռ.՝ +37491 465 775
Էլ.փոստ՝ khnamk@hotmail.com

ԱՆՁԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ

Անձի հետազոտումն իրականացվում է վերջինիս **հոգեկան խանգարման առկայությունը ճշտելու**, ինչպես նաև հոգեբուժական օգնություն տրամադրելու անհրաժեշտությունը պարզելու նպատակով:

Հոգեբուժական հետազոտումն իրականացվում է **հետազոտվողի կամ նրա օրինական ներկայացուցչի**[3] **համաձայնությամբ՝** այն դեպքում, երբ հետազոտվող անձին բժիշկը **տեղեկացրել է** անձի վիճակի, հետազոտման բնույթի մասին:

Հոգեբուժական հետազոտումը կարող է իրականացվել առանց հետազոտվողի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության միայն այն դեպքերում, երբ հետազոտվողը, հոգեկան վիճակից ելնելով, անկարող է արտահայտել իր ազատ կամքը և չունի օրինական ներկայացուցիչ:

Հոգեբուժական հետազոտում իրականացնող բժիշկը **պարտավոր է** հետազոտվողին կամ նրա օրինական ներկայացուցչին ներկայանալ որպես հոգեբույժ և հայտնել կատարվող հետազոտության բնույթի ու հետևանքների մասին:

[3] Օրինական ներկայացուցիչ են համարվում անձի ծնողները, (որդեգրողները) խնամակալները կամ հոգաբարձուները համապատասխան փաստաթղթի առկայության դեպքում:

Հոգեբուժական ստացիոնար հիվանդանոց հոսպիտալացված (ընդունված) անձը կամ հետազոտվողն առաջին օրվա ընթացքում զննվում է բուժող բժշկի, իսկ հանգստյան և տոնական օրերին ընդունվածները՝ հերթապահ բժշկի կողմից:

Ոչ հոժարակամ՝ հարկադիր, հոսպիտալացված անձիք 72 ժամվա ընթացքում հետազոտվում են հոգեբուժական հանձնաժողովի կողմից, հոգեբուժական հանձնաժողովի եզրակացության համաձայն հաստատության տնօրենը դիմում է դատարան՝ անձի նկատմամբ հարկադիր բուժում նշանակալու որոշում կայացնելու նպատակով:

Անձի նկատմամբ դատարանի կողմից կայացված հարկադիր բուժում նշանակելու վերաբերյալ որոշումն անձը դատական կարգով բողոքարկելու իրավունք ունի:

ԲՈՒԺԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ ՊԱՐՏԱՎՈՐ ԵՆ՝

- Յուրաքանչյուր մարդու ցուցաբերել անհետաձգելի առաջին բժշկական օգնություն՝ անկախ այդ օգնության դիմաց վարձատրությունը երաշխավորող հիմքերի և այլ հանգամանքների առկայությունից,

հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Էրեբունու համայնք, Նուբարաշենի փող., 1/3 շենք,
հեռ.՝ (+374) (010) 47 67 11,

ՀՀ ԱՆ «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի Նորքի հոգեբուժական կլինիկա,
հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հովսեփյան փողոց թիվ 2ա,
հեռ.՝ (+374) 010 65 08 32, (+374) 010 65 08 51,

ՀՀ ԱՆ «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի Ավանի հոգեբուժական կլինիկա,
հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Աճառյան 21,
հեռ.՝ (+374) 010 61 65 33,

ՀՀ ԱՆ «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի Քասախի նևրոզների կլինիկա,
հասցե՝ ՀՀ, Կոտայքի մարզ, գյուղ Քասախ,
հեռ.՝ (+374) 091 21 51 18,

«Ակադեմիկոս Ա. Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն» ՓԲԸ,
հասցե՝ ՀՀ, Արարատի մարզ, գյուղ Արմաշ,
հեռ.՝ (+374) (0234) 6 21 93, (+374) (0234) 6 03 99:
«Սթրես» հոգեկան առողջության կենտրոն,
հասցե՝ ք. Երևան, Ծարավ աղբյուրի 55 ա
հեռ.՝ (+374) (10) 62 89 97, (+374) (10) 62 17 41,
«Ինթրա» հոգեկան առողջության կենտրոն,
հասցե՝ ք. Երևան, Սևքարեցի Սաքո 25ա,
հեռ.՝ (+374) (10) 26 35 43

ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՔ ԲՈՒԺՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԴԻՄԵԼ

«Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ,
հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Բաղաբերդ 48,
հեռ.՝ (+374) (0286) 5 37 12,

ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ,
հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Ղարսի խճուղի 2ա,
հեռ.՝ (+374) (0312) 5 04 28,

ՀՀ ԱՆ «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ,
հասցե՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Երևանյան փող. 2,
հեռ.՝ (+374) (0261) 2 14 13,

«Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՓԲԸ,
հասցե՝ ք. Վանաձոր, Գ. Նժդեհի 57,
հեռ.՝ (+374) (0322) 2-01-88,

ՀՀ ԱՆ «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի Նուբարաշենի հոգեբուժական կլինիկա,

- Հոգատար և հարգալից վերաբերմունք ցուցաբերել հիվանդների նկատմամբ,
- Բժիշկը պարտավոր է անձին կամ նրա օրինական ներկայացուցչին տեղեկություններ տրամադրել հիվանդության բնույթի, առաջարկվող բուժման նպատակի, մեթոդաբանության, տևողության, ինչպես նաև կողմնակի ազդեցության և ակնկալվող արդյունքների մասին[4]:

ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԲՈՒԺՈՒՄԸ

Հոգեկան առողջությունը համարվում է մարդու անօտարելի և մնայուն ոչ նյութական արժեք: **Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող ՀՀ քաղաքացիների բուժումը Հայաստանի Հանրապետությունում անվճար է:**

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց տրամադրվում է արտահիվանդանոցային կամ հիվանդանոցային բժշկական օգնություն:

[4] «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդված

Արտահիվանդանոցային ձևով բժշկական օգնություն և սպասարկում տրամադրվում է այն անձանց, ովքեր, ելնելով իրենց առողջական վիճակից, հոգեբուժական հիվանդանոցում տեղավորման կարիք չունեն:

Հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում ստանում են այն անձիք, որոնց առողջական վիճակը պահանջում է իրականացնել հիվանդանոցային պայմաններում բուժում և խնամք:

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի բուժումը կատարվում է նրա կամ նրա օրինական ներկայացուցչի գրավոր դիմումի համաձայն, բացառությամբ այն դեպքերի, երբ անձը կարիք ունի հարկադիր (ոչ հոժարակամ) բուժման:

ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑՈՒՄ ԲՈՒԺՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Հոգեբուժական հիվանդանոցում բուժում ստանալու համար անհրաժեշտ է հերթապահ բժշկին ներկայացնել՝

- անձի ստացիոնար բուժման վերաբերյալ ուղեգիրը,

հիման վրա կամ հիվանդի պահանջով, բացառությամբ այն դեպքերի, երբ հիվանդը տվյալ պահին հասարակական վտանգ է ներկայացնում:

Հարկադիր բուժման մեջ գտնվող հիվանդները դուրս են գրվում **միայն դատարանի որոշմամբ,** իսկ ոչ հոժարակամ հոսպիտալացվածները՝ հոգեբուժական հանձնաժողովի որոշմամբ:

ԱՆՁԻ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ

Մարդու առողջական վիճակի մասին տեղեկությունը նրա կամքին հակառակ չի կարող հաղորդվել նրան կամ այլ անձանց, բացի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերից:

Անձանց հոգեկան առողջության վերաբերյալ տեղեկությունները բժշկական գաղտնիք են: Այդպիսի տեղեկությունները տրամադրվում են հիվանդին և նրա օրինական ներկայացուցչին նրանց պահանջով՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով, ինչպես նաև օրենքով սահմանված այլ դեպքերում: Հոգեբուժական հետազոտման տվյալները և եզրակացությունը գրանցվում են բժշկական փաստաթղթերում (ամբուլատոր քարտում կամ հիվանդության պատմության նկարագրում):

ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՀՐԱԺԱՐՈՒՄԸ

Հոգեկան առողջության խնիրներ ունեցող անձը կամ նրա օրինական ներկայացուցիչն իրավունք ունի հրաժարվել առաջարկված բուժօգնությունից կամ դադարեցնելու այն, բացառությամբ այն դեպքերի, երբ բուժումից հրաժարման մասին դիմումի ստացման պահին պարզվում է, որ անձն իր հոգեկան վիճակով անմիջական վտանգ է ներկայացնում իր կամ շրջապատի համար:

Բուժումից հրաժարվող անձին կամ նրա օրինական ներկայացուցչին պետք է բացատրվեն բուժման դադարեցման հնարավոր հետևանքները՝ այն արձանագրելով հիվանդության պատմագրում՝ հոգեբույժի և հրաժարվողի ստորագրություններով:

ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻՑ ԱՆՁԻ ԴՈՒՐՍ ԳՐՈՒՄԸ

Ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում հոժարակամ (կամավոր) կարգով գտնվող հիվանդի դուրսգրումը կատարվում է նրա լավացման և առողջացման դեպքում, ինչպես նաև նրանց դիմումի կամ նրանց օրինական ներկայացուցիչների դիմումների համաձայն, հոգեբույժի եզրակացության

- անձը հաստատող փաստաթուղթ, բացի անհետաձգելի հոսպիտալացման ենթակա դեպքերից:

Եթե ընդունվողի մոտ փաստաթղթեր չկան, և անհնար է նրա մասին որևէ տեղեկություն ստանալը, ապա նրա ընդունվելու մասին տեղյակ է պահվում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության տարածքային բաժնին:

ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ ՀՈԺԱՐԱԿԱՄ (ԿԱՄԱՎՈՐ) ՀՈՍՊԻՏԱԼԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Անձը կարող է հոժարակամ հոսպիտալացվել ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունք, եթե նրա մոտ առկա է `

- հոգեկան խանգարում,
- բժիշկ-հոգեբույժի կողմից տրված ստացիոնար հետազոտության կամ բուժման մասին եզրակացություն,
- հոգեբուժական փորձաքննություն իրականացնելու անհրաժեշտություն:

ՈՉ ՀՈԺԱՐԱԿԱՄ (ՀԱՐԿԱԴԻՐ) ՀՈՍՊԻՏԱԼԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Անձը կարող է հարկադիր (ոչ հոժարակամ) հոսպիտալացվել հոգեբուժական հիվանդանոց, եթե հոգեբուժական հանձնաժողովի եզրակացության համաձայն՝ անձը վտանգ է ներկայացնում իր և շրջապատի համար:

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձիք կարող են հոսպիտալացվել պոլիկլինիկաների և դիսպանսերների հոգեբույժների ուղեգրի համաձայն, իսկ շտապ օգնության հոգեբուժական բրիգադների կամ հարազատների կողմից բերված՝ անհետաձգելի հոսպիտալացման ենթակա անձիք՝ տվյալ հոգեբուժական հաստատության հերթապահ բժշկի ուղեգրով:

Անձի նկատմամբ **հարկադիր բուժում** նշանակելու վերաբերյալ դատարանին դիմում ներկայացնելու **իրավունք ունի** այն հոգեբուժական հաստատության տնօրինությունը, որում բուժվում է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձը: Դիմումին կցվում է հոգեբուժական հաստատությունում անձի հետագա գտնվելու անհրաժեշտության վերաբերյալ բժիշկ-հոգեբույժների հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը:

ԲԺՇԿԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՐԿԱԴՐԱՆՔԻ ՄԻՋՈՑԻ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Միայն դատարանի որոշմամբ կարող է անձի նկատմամբ նշանակվել բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ այն դեպքում, երբ անձը վտանգ է ներկայացնում իր կամ շրջապատի համար և հանցանք է կատարել անմեղսունակության կամ սահմանափակ մեղսունակության վիճակում, կամ նրա կողմից հանցանքը կատարելուց հետո առաջացել է պատժի նշանակումը կամ կատարումն անհնար դարձնող հոգեկան խանգարում:

Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ են՝

- հոգեբույժի մոտ արտահիվանդանոցային հսկողությունը և հարկադիր բուժումը,
- հոգեբուժական կազմակերպությունների ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժումը,
- հոգեբուժական հիվանդանոցի հատուկ տիպի հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժումը: